ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-23/01» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան **« 08 » « սեպտեմբերի » 2022թ.**

ժամը 10:00

Մասնակցում էին՝

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ)	Ա.Սայադյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Լ.Փափախչյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Զ.Անդրեասյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Լ.Սինանյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Վ.Հովհաննիսյան
Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ)	Տ.Մեհրաբյան

1. «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-23/01» ծածկագրով մրցույթի մասնակիցների կողմից ներկայացրած հայտում առկա անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ տեղեկություններ

1.1. «Մեգասոֆթ» ՍՊ ընկերությունը սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունը՝ ներկայացրել է Հավելված 1-ը՝ դիմում-հայտարարությունը հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

1.2. «Այթիռեսուրսիս» ՍՊ ընկերությունը սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունը՝ ներկայացրել է Հավելված 1.1-ը՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը՝ հրավերով սահմանված պահաջներին համապատասխան:

2. Տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ

2.1. «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-23/01» ծածկագրով մրցույթի մասնակիցների ներկայացված գնային առաջարկների արդյունքում առաջին տեղ զբաղեցնող ճանաչել «Մեգասոֆթ» ՍՊԸ-ին, երկրորդ տեղ՝ «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ին, երրորդ տեղ՝ «Փուշընդփուլլ» ՍՊԸ-ին:

3. Հանձնաժողովը որոշեց՝

(Ա.Սայադյան)

3.1. Հանձնաժողովի քարտուղարին՝

3.1.1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի №526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը և Հրավերի 1-ին մասի 8.6 և 8.7 կետերը՝ «Մեգասոֆթ» ՍՊ, «Այթիռեսուրսիս» ՍՊ և «Փուշընդփուլլ» ՍՊ ընկերություններին առաջարկված գնի նվազեցման շուրջ հրավիրել բանակցությունների 2022 թվականի սեպտեմբերի 13-ին, ժամը 10:00-ին, հասցեն՝ շրջակա միջավայրի նախարարության շենքում, ք.Երևան, Կառավարական տուն 3, 5-րդ հարկ 529 սենյակ հասցեում:

3.1.2. Ծանուցել գնանշման հարցման մրցույթի մասնակիցներին բանակցությունների վարման պայմանների, տևողության, օրվա, ժամի և վայրի մասին:

3.2. Բանակցությունների վարման պայմաններն են՝ տևողությունը մինչև 30 րոպե, գների նվազեցման բանակցությունները մեկնարկելու է առավելագույն գնից նվազագույն գին ներկայացրած մասնակցների հաջորդականությամբ, յուրաքանչյուր մասնակցի նոր գնային առաջարկի ներկայացման համար տրամադրվելու է 3 րոպե ժամանակ, բանակցությունները վարվելու են մինչև սահմանված ժամանակի լրանալը կամ նվազագույն գնի ձևավորումը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը

(Ա.Սայադյան)

4.1. «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-23/01» ծածկագրով մրցույթի մասնակիցների հետ բանակցությունների նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել ծանուցումն ուղարկելու օրվան հաջորդող օրվանից հաշված երրորդ աշխատանքային օրը՝ 2022 թվականի սեպտեմբերի 13-ին, ժամը 10:00-ին, հասցեն՝ շրջակա միջավայրի նախարարության շենքում, ք.Երևան, Կառավարական տուն 3, 5-րդ հարկ 529 սենյակ հասցեում:

5. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները:

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ)		Ա.Սայադյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)		Լ.Փափախչյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)		Զ.Անդրեասյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)		Լ.Սինանյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)		Վ.Հովհաննիսյան
Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ)		Տ.Մեհրաբյան